



**ՀՀ կառավարության «Հրապարակում» հաղորդաշարի**

1. Մեր նկարահանող խումբը օրերս եղել է Արագածոտնի մարզի Ավան գյուղում, որտեղ ոռոգման ջրի լուրջ խնդիր կա: Գյուղացիների հավաստմամբ, մոտ 70 օր է, ինչ գյուղը զրկված է ոռոգման ջրից: Խնդրում ենք տեղեկացնել՝ տեղյակ եք արդյոք խնդրին, եթե այո, ինչ քայլեր են ձեռնարկվել Ձեր կողմից խնդրի լուծման ուղղությամբ:

**Պատասխան**-Նշված խնդրին լիովին տիրապետում է ՀՀ Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանը: Հաշվի առնելով ոռոգման շրջանում առկա դժվարությունները, մարզպետի ղեկավարությամբ 2014թ. մայիս ամսից սկսած, 5-10-օրյա պարբերականությամբ խորհրդակցություններ են անցկացվել Ավան եւ հարակից համայնքների ղեկավարների, Ամբերդ ՋՕԸ-ի տնօրինության մասնակցությամբ, որտեղ քննարկվել են ոռոգման հետ կապված խնդիրները, տրվել են համապատասխան հանձնարարականներ: 2014թ. ոռոգման ողջ շրջանում, առ այսօր չի եղել մեկ օր, որ Ավան համայնքը զրկված լինի ոռոգման ջրից: Կից ներկայացվում է Ավան համայնքի ղեկավարի տեղեկանքը, որտեղ տրված են համապատասխան պարզաբանումներ:

2. Ավանցիները վստահ են, որ ոռոգման ջրի բացակայությունը կապված է ոչ այնքան ցամաքող Ամբերդ գետի, որքան գյուղի մոտակայքում կառուցված 2 ԳԷՄ-երի հետ: Նրանք պնդում են, որ գյուղին այսպես ասած հասանելիք ջուրը օգտագործվում է ԳԷՄ-երի շահագործման նպատակով: Արդյոք ուսումնասիրվել է այս խնդիրը, որն է Ձեր տեսակետն այս առնչությամբ:

**Պատասխան**-Ամբերդ գետի վրա գործում է 2 ՀԷԿ: Առաջին ՀԷԿ-ը բացարձակապես կապ չունի ոռոգման ջրի բաշխման հետ: Երկրորդ ՀԷԿ-ը աշխատում է Բյուրական համայնք գնացող ոռոգման ջրով: Կա ՀՀ նախագահի հանձնարարականը, որպեսզի ոռոգման շրջանում ՀԷԿ-ը չաշխատի, և ջուրը օգտագործվի բացառապես ոռոգման նպատակով: Խնդիրը գտնվում է մարզպետ Սարգիս Սահակյանի ամենօրյա ուշադրության կենտրոնում:

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին

01.09.2014